# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 31-Լ

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 25.02.2020Թ. ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1671-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի և ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 25.02.2020թ. «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի կազմը և հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետում «ՀԱԱԳՎ պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Է. Պետրոսյան» բառերը փոխարինել «ՀԱԱԳ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գ. Այվազյան» բառերով:
2. Հրամանը հայտարարել թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի անդամներին:

**ԳՆԴԱՊԵՏ** **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«21» 08 2020թ.
ք. Երևան